ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԱՇՈՏ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր սերունդ իր ազգային հիշողությունից վերցնում, ժամանակի քննախույզ հայացքով գնահատում և ապագային է փոխանցում անուններն այն արժանահիշատակների, որոնք անձնվեր տքնության համար վաստակում են ժողովրդի անանց հարգանքը: Հայ ժողովրդի համար այդպիսի անուն է նաև հասարակական-քաղաքական, մշակութային անվանի գործիչ և մեծ պատմաբան հայագետ Աշոտ Գարեգինի Հովհաննիսյանը: Չափազանց ուրախ ենք, որ «Արարատ» ամսագրի հայագիտական մատենաշարով Ս. Էջմիածնի հրատարակչական բաժինը լույս է ընծայել իր հերթական հատորը, որն ընդգրկում է Աշոտ Հովհաննիսյանի՝ «Արարատ» ամսագրում տպագրված պատմագիտական ուսումնասիրությունները: Ժողովածուն կազմել և «Աշոտ Հովհաննիսյանի պատմագիտական ժառանգությունը» խորագրով առաջաբանը գրել է հայ նորադարյան պատմագիտական մտքի գիտակ պատմաբան Պետրոս Հովհաննիսյանը: Առաջաբանի հեղինակը դիպուկ և ճշգրիտ է բնութագրել նշանավոր գործչի ու գիտնականի անցած ճանապարհը: Ապրելով և ստեղծագործելով XX դարի հանգուցային ու հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող մի պատմաշրջանում՝ Աշ. Հովհաննիսյանն ամենագործուն մասնակցությունն է ունեցել շրջադարձային բոլոր իրադարձություններին: Բարդ ու հակասական ժամանակաշրջանում ապրած իր կյանքի բոլոր փուլերում նա չխնայեց ջանք ու եռանդ, մաքառեց գրչով ու գործով, ստալինյան բռնատիրության ժամանակ ենթարկվեց դաժան հալածանքների, ճաշակեց Գուլակի դժոխային իրականությունը:

Աշ. Հովհաննիսյանը ծնվել է 1887 թ. Արցախ աշխարհի Շուշի քաղաքում. գավառական մի քաղաք, որը, սակայն, նշանակալից հետք է թողել հայ ժողովրդի վերջին ավելի քան երկու հարյուրամյակի պատմության մեջ: Հատկապես XIX դարի վերջին և XX դարի սկզբին մշակութային հայտնի կենտրոն Շուշին դարձել էր նաև գաղափարական իրարամերժ բախումների ասպարեզ, ծնունդ տվել գործիչների, որոնք տարբեր ուղիներով էին ընթանում, տարբեր քաղաքական կողմնորոշումներում որոնում իրենց ժողովրդի ազատագրությունը: Երիտասարդ Աշ. Հովհաննիսյանը չհրապուրվեց ազգային կուսակցությունների ռոմանտիկ ծրագրերով: Շուշիի ռեալական ուսումնարանն ավարտելուց հետո, բարձրագույն կրթություն ստանալու նպատակով, նա 1906 թ. մեկնում է Գերմանիա, ընդունվում Ենայի համալսարանի փիլիսոփայության բաժինը, ուսանում նաև Հալլեի և Մյունխենի համալսարաններում: Այստեղ էլ՝ Գերմանիայում, նա նույն թվականին անդամակցում է Ռուսաստանի սոցիալ-դեմոկ-

բատական բանվորական կուսակցության արտասահմանյան կազմակերպությանը: Ուսումնառության տարիներին Աշ. Հովհաննիսյանը խորանում է փիլիսոփայության, պատմության, տնտեսագիտության մեջ, տիրապետում գերմաներեն, ֆրանսերեն և լատիներեն լեզուներին: Տոգորված լինելով հայ ժողովրդի ազատագրության գաղափարով՝ նա սկսում է ուսումնասիրել նրա ազատագրական պայքարի պատմությունը: 1913 թ. մարտին նա Մյունխենի համալսարանում պաշտպանում է «Իսրայել Օրին և հայ ազատագրական գաղափարը» վերտառությամբ ատենախոսությունը և ստանում փիլիսոփայական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Գիտելիքների մեծ պաշարով զինված՝ Աշ. Հովհաննիսյանը վերադառնում է հայրենիք և աշխատանքի անցնում Շուշիի հայկական հոգևոր սեմինարիայում, որտեղ դասավանդում է ընդհանուր պատմություն և գերմաներեն: 1914 թվականի սեպտեմբերին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ա Սուրենյանցի առաջարկությամբ տեղափոխվում է Վաղարշապատ և նշանակվում Գևորգյան Ճեմարանի քաղաքատնտեսության, լատիներենի, գերմաներենի և ընդհանուր պատմության առարկաների դասախոս:

Գևորգյան Ճեմարանի ուսումնասեր միջավայրը նպաստավոր եղավ Հովհաննիսյանի գիտական բուռն հետաքրքրասիրություններին ինչ-որ չափով հագուրդ տալու համար: Պարապմունքներից ազատ ժամերին նա աշխատում էր Մայր Աթոռի հարուստ գրադարանում և ձեռագրապահոցում: Նրա հետաքրքրությունների մեջ ներառվում էին հայ միջնադարի ազատագրական պայքարի և մելիքական տոհմերի պատմությունները: Իր գիտական հետազոտությունների արդյունքները նա հոդվածների է վերածում և տպագրում «Արարատ» ամսագրի էջերում և առանձին գրքույկներով: Այդ հետազոտություններում («ԺԳ դարի մի ուղևորի վկայությունը հայոց մասին», «Նոր նյութեր հայ-ունիթորական պատմագրությունից», «Հակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսը և տաճկահայ նվիրակության խնդիրը», «Հակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին», «Գրախոսական-քննադատական նյութեր հայ մելիքության մասին, Բ պրակ, Դոփյանք և Մելիք Շահնազարյանք: Գրեց Կարապետ եպիսկոպոս, Ս. Էջմիածին, 1914, հրատ. Ազգ. ընկ.», «Պետրոս Դի Սարգիս Գիլանենց (պատմական-կենսագրական ակնարկ)», «Հայ-ռուս օրիենտացիայի ծագման խնդիրը. պատմական-քննադատական ուսումնասիրություն», «Գեղամա և Ծարա մելիքների տոհմը») Աշ. Հովհաննիսյանը հետամուտ է լինում հայ ազատագրական մտքի պատմության անհայտ էջերի որոնմանը, երևան հանում նոր փաստեր և տալիս դրանց իր նոր մեկնաբանությունները: Այդ ուսումնասիրություններն աչքի են ընկնում ոչ միայն ասելիքի թարմությամբ, այլև ուղենշում են հայ պատմագիտության առաջընթացի նոր ուրվագծեր:

Իր այս հետազոտություններում գիտնականը ակնբախ է դարձնում, որ խիստ յուրահատուկ է եղել Առաջավոր Ասիայի մատույցներում ռազմավարական կարևոր դիրք գրավող Հայաստանի պատմական ճակատագիրը: Հարյուրամյակներ շարունակ այն կռվախնձոր է դարձել Արևելքի և Արևմուտքի աշխարհակալ պետությունների միջև, դարձել արյունալի գոտեմարտերի ասպարեզ: Ավատատիրական տարանջատվածությունն ու անընդմեջ երկպառակությունները խոչընդոտել են կենտրոնաց-

ված միասնական և ուժեղ պետականության ստեղծմանը, թուլացրել երկրի ռազմունակությունը և հաճախ անզոր դարձել արտաքին հարվածների դիմաց: Հայաստանի ինքնուրույնությանն ու անկախությանը հիմնակործան հարվածներ հասցրին և վերջ դրեցին Արևելքից խուժած վաչկատուն նվաճողների արշավանքները՝ խաթարելով երկրի բնականոն զարգացումը, ետ շրջելով առաջընթացը: Նորեկ բռնատերերի գարշապարի տակ ժողովուրդը զինազրկվեց և սկսեց կորցնել հավատը ինքնուրույն ազգային պետականության նկատմամբ:

Պատմական իրողության նման տարաբախտ ընթացքը, հարկադրյալ աննախընթաց արտագաղթը, որպես փրկության հնարավոր ու դյուրին ելք, օտար ցեղերի Հայաստանում հիմնավորվելը առավել ևս թուլացրին հայության դիմադրական կարողությունն ու դժվարացրին սեփական ուժերով ազատագրվելու ելքը: Դրա համար հայության ազատագրական բաղձանքներն ստացան որոշակի միստիկական երանգ, ձեռք բերեցին կրոնական գունավորում՝ ծնունդ տալով դրսի ուժերից փրկության ակնկալության տեսիլների ու լեգենդների:

Յուրաքանչյուր սոցիալական միջավայրում յուրահատուկ գունավորում ստանալով հանդերձ, այդ տեսիլներն ու լեգենդները միաբնույթ էին մի կարևոր խնդրում՝ անպայման հայ ժողովուրդը ազատագրվելու է և այդ ազատագրությունը հնարավոր է միայն արտաքին օգնության շնորհիվ, որը բերելու էին հեռավոր, բայց հզոր քրիստոնյա պետությունները: Ազատագրական պայքարի խնդրում, սակայն, փոքր-ինչ այլ դիրքորոշում ուներ հասարակ ժողովուրդը, գյուղացիությունը: Նա հույսը չէր կապում օտար միջամտության հետ, նա փրկության ուղին տեսնում էր իր մեջ, իրեն ծնած հերոսների մեջ: Պատահական չէ, որ հակադրվելով իշխող տեսիլներին ու գուշակություններին, հայ ժողովուրդը ստեղծեց իր ազատարարին՝ «Սասնա ծռերի» Մհերին, որը կյանքի էր կոչվում ժամանակագրական նույն շրջանակներում և նույն տարածքում, որտեղ և ծնունդ էր առնում հայ ազատագրական լեգենդը: Շատ ավելի ուշ միայն՝ 18-րդ դարի 20-ական թթ., երբ Ռուսաստանից օրավուր սպասվում էին ռազմական օգնության ակնկալիքները, լեգենդի ազատագրական գաղափարը համակեց նաև ժողովրդի լայն խավերին՝ դառնալով նաև նրանց գաղափարախոսությունը:

Ժողովածուում զետեղված ուսումնասիրություններում Աշ. Հովհաննիսյանը, վերլուծելով պատմության պահպանած և իր կողմից առաջին անգամ շրջանառության դրած փաստերը, ցույց է տալիս այն առանձնահատուկ գործընթացը, որով ընթացել է հայ ժողովրդի ազատագրական միտքը, քննարկում է հայ ազատագրական շարժման գործիչների ունեցած երբեմնի սին պատրանքները: Քննական վերլուծության հանգուցակետում են հատկապես այն փաստերի ուսումնասիրությունները, որոնք նախապատրաստեցին և հանգուցավորեցին ազատագրության համար պայքարող ազատագրական մտքի՝ պատմության կողմից արդարացված շրջադարձը դեպի Ռուսաստան, որոնք Իսրայել Օրուն Արևմուտքում կատարած երկարատև ու ապարդյուն դեգերումներից հետո տարան Մոսկվա: Տրամաբանորեն ըմբռնելի դարձնելու և իմաստավորելու համար հայ ազատագրական մտքի շրջադարձը, Աշ. Հովհաննիսյանն իրեն հատուկ խոհեմ խորաթափանցությամբ մեկնաբանում է արևմտաեվրոպական տե-

ությունների հետ կատարված բանակցությունները, ցույց տալիս քաղաքական նախընթաց ուղեգծի անհեռանկարայնության հիմնապատճառները:

Վերոհիշյալ այս բոլոր խնդիրներն ու հիմնահարցերը քաղաքագետ հայագետն ու պատմաբանը առավել հանգամանորեն քննության առավ «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության» երկհատոր աշխատության մեջ. հայ գրքի և մատենագրության պատմության բացառիկ երևույթներից մեկը, որի առաջին հատորը լույս տեսավ 1957 թ., իսկ երկրորդը՝ 1959 թ-ին: Հայ նոր ու նորագույն պատմագիտության մեջ դա մի եզակի երկ է, որի հեղինակի հենց միայն հայացքների համակարգի՝ ազատագրության տեսիլների լեգենդների կռահումը և դրա դարավոր ուղիների քննական վերլուծությունը, փաստա-աղբյուրագիտական նյութի դասակարգումը բավական են հավաստելու պատմաբանի երևակայության թռիչքը և տեսահորիզոնի լայնությունը, ինքնակարողության չափը և ընթերցողին ենթարկող հզոր ուժը:

Աշ. Հովհաննիսյանը, հարկավ, իր բոլոր աշխատությունների հանրագումարում («Նալբանդյանը և նրա ժամանակը», «Ֆրիկը պատմաքննական լույսի տակ», և այլն) գիտական նոր բարձունքի վրա դրեց հայ պատմաքննական միտքը և իր տեղը վավերացրեց հայագիտության պատմության դասականների շարքում:

Եզրափակելով մեր խոսքը Գևորգյան Ճեմարանում աշխատած տարիներին Աշ. Հովհաննիսյանի գրած ուսումնասիրությունների ժողովածուի հրատարակման առթիվ, ցանկանում ենք երախտագիտություն հայտնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչությանը և ժողովածուն կազմող Պետրոս Հովհաննիսյանին, ժողովածու, որը պատմագիտական մշտամնա արժեք է: